# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ
համայնք, 5-փ 7, Հեռ. 2-42-26 , norik.melkonyan@mail.ru

N 34
*14 փետրվար 2020թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարին կայացրած թիվ 04-Ա- 05-Ա որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Կատ. Քարտուղար՝ Մ. Կարապետյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2020 թվականի N 04-Ա

## ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, <<Հանրաքվեի մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 11-ի թիվ 3-Ա որոշումը՝

*որոշում եմ*

1.2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի նախապատրաստման և անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքում ընտրական տեղամաս սահմանել 5-րդ փողոց թիվ 6 հասցեում գտնվող Ողջաբերդի միջնակարգ դպրոցը:

2. Սույն որոշման մասին տեղեկացնել լիազոր մարմնին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնը տիրապետող կազմակերպության ղեկավարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2020թ. փետրվարի 12

գ.Ողջաբերդ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2020 թվականի N 05-Ա

## ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Հանրաքվեի մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասով՝

*որոշում եմ*

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քարոզչական պաստառները փակցնելու համար Ողջաբերդ համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղերն են՝
1)Ողջաբերդ համայնքի 1-ին փողոցի 1-ին փակուղու 1/1 հասցեն
2)Ողջաբերդ համայնքի 1-ին փողոցի 35 հասցեն
3)Ողջաբերդ համայնքի 5-րդ փողոցի 76 հասցեն:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

20*20*թ. *փետրվարի* *12*

գ.Ողջաբերդ